ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

«ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՆԵՐ ՀԱՆՁՆՎԵՑԻՆ ԶՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ

Հունվարի 27-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Բանակի օրվա առիթով արդեն ձևավորված ավանդույթի համաձայն, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Գերաշնորհ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին Հայ Եկեղեցու թեմական առաջնորդներ, ՀՀ բանակի բարձրագույն սպայական կազմը՝ գլխավորությամբ ՀՀ Պաշտպանության նախարար Միքայել Հարությունյանի, զինվորներ և բարեպաշտ հավատացյալներ:

Հընթացս Սուրբ Պատարագի կատարվեց Հանրապետական մաղթանք՝ Հայաստանի Հանրապետության անսասանության ու պայծառության և Հայոց բանակի առավել զորացման համար:

Մասնավոր այս աղոթքի արարողությունից առաջ օրվա խորհրդով քարոզ խոսեց Անուշավան Սրբազանը՝ մասնավորապես նշելով. «Մեր բոլոր ձեռքբերումները, նվաճումները, հաղթանակները հաջողությամբ են պսակվել, որովհետև մենք բոլորս զորավոր հավատացել ենք դրանց: Միայն հավատք. հավատք՝ անմահության, հավատք՝ հարության: Հոգևոր զենք, գաղափարական զենք, բարոյական զենք, սակայն զենքերի զենքը հավատքն է, որի դիմաց փշրվում են բոլոր զենքերը: Այդ զենքով է շահված քրիստոնեության հաղթանակը: Հենց այդ զենքով զինված մեր ազգի զավակներն Ավարայրում, Սարդարապատում և Արցախում կանգնեցին մեր անկախությանը և հայրերի հավատքին սպառնացող թշնամու դեմ: ....Մեր ժողովրդի կենաց ծառը, մեր բանակն ավելի հասակ կառնի, կզորանա, եթե մենք ամուր կառչենք մեր արմատներից, որտեղից որ սնունդ ենք առնում: Դարձ դեպի մեր արմատները, դարձ դեպի մեր ինքնությունը, դարձ դեպի մեր արժանապատվությունը, դարձ դեպի մեր արժեքները, որոնք խորթ չեն, հարազատ են, մերն են՝ մեր արյունին խառնված, մեր հայրերի հոգով կյանք առած, մեր նախնյաց արյունով մկրտված»:

Ս. Պատարագից հետո Հայրապետական թափորը և բանակի սպայական կազմն ուղղվեցին դեպի Վեհարան, ուր տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն: Ընդունելությունը բացվեց ՀՀ Զինված ուժերի հոգևոր առաջնորդ Տ. Վրթանես վարդապետ Աբրահամյանի շնորհավորական խոսքով: Այնուհետև Հայոց բանակի բարձրաստիճան սպայական կազմին իր Հայրապետական օրհնությունն ու շնորհավորանքը բերեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունն ու-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ Ս. ԱԼԻՍԱՆՅԱՆԻ ՀԵՏ

բախություն հայտնեց, որ նվիրական այս օրը եկեղեցականաց դասը զորականների հետ համատեղ աղոթքի է կանգնում Մայր Տաճարի Ս. Խորանի առջև և հայց բարձրացնում երկրի խաղաղության համար: Վեհափառ Հայրապետն իր բարեմաղթանքներն ուղղեց ներկաներին՝ աղոթելով, որ Տերը Հայոց բանակի յուրաքանչյուր սպասավորին ապահով պահի խաղաղ ծառայության մեջ և որ հաղթանակները միշտ ուղեկից լինեն Հայոց բանակին:

Այնուհետև ընդունելության համար Վեհափառ Հայրապետին շնորհակալություն հայտնեց և բարձրագույն սպայական կազմին շնորհավորեց ՀՀ Պաշտպանության նախարար Միքայել Հարությունյանը:

Ընդունելության ընթացքին Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշաններ հանձնեց ՀՀ Պաշտպանության փոխնախարարներ գեներալ-լեյտենանտ Ալիկ Միրզաբեկյանին, գեներալ-լեյտենանտ Գուրգեն Մելքոնյանին և ԼՂՀ Պաշտպանության նախարար գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ